



Հղիության ընթացքում վճարվող նպաստները

Ձեր անաշխատունակության սկիզբը համարվում է այն օրը, երբ դուք այլևս ի վիճակի չեք իրականացնել ձեր սովորական աշխատանքային պարտականությունները: DI նպաստները հաշվարկվում են այն ժամանակահատվածի համար, երբ դուք ի վիճակի չեք կատարել ձեր ընթացիկ աշխատանքը, ինչը հաստատվում է ձեզ սպասարկող առողջապահության ոլորտի լիցենզավորված մասնագետի կողմից: Ձեր հղիության հետ կապված անաշխատունակության և ծննդաբերությունից հետո վերականգնման համար կարող եք դիմում ներկայացնել DI:

Կլինիկական բարդությունների բացակայության դեպքում՝ դուք կարող եք ստանալ նպաստներ ծննդաբերությանը նախորդող չորս շաբաթից մինչև ծննդաբերությունից հետո մինչև վեց շաբաթ ժամանակահատվածի համար: Կեսաբյան հատման դեպքում՝ դուք կարող եք նպաստ ստանալ ծննդաբերությունից հետո մինչև ութ շաբաթ ժամանակահատվածի համար:

DI-ի կողմից ձեզ վճարվող հղիության նպաստի ավարտից հետո դուք կարող եք ստանալ ձեր նորածնի հետ ժամանակ անց կացնելու համար մինչև ութ շաբաթ տևողությամբ մտերմացման վճարովի ընտանեկան արձակուրդ (PFL): PFL մտերմացման հայցի ձևաթուղթը ավտոմատ կերպով ուղարկվում է DI նպաստի վերջնական վճարման հետ միասին:

Անաշխատունակության ժամանակ խնամքի կարիք ունենալու դեպքում

Եթե անաշխատունակության ընթացքում խնամքի կարիք ունեք, արձակուրդ վերցնելու և ձեր մասին հոգ տանելու նպատակով ձեր երեխան, ծնողը, ամուսնու ծնողը, տատը կամ պապը, թոռը, քույրը կամ եղբայրը, ամուսինը կամ գրանցված տնային զուգընկերը կարող է իրավասու լինել մինչև ութ շաբաթ PFL նպաստ ստանալու համար: Ավելին իմանալու համար՝ այցելեք [California PFL](http://edd.ca.gov/en/disability/paid-family-leave) (edd.ca.gov/en/disability/paid-family-leave):

Ինչ է անաշխատունակությունը

Անաշխատունակությունը հիվանդության կամ վնասվածքի արդյունքում առաջացած ֆիզիկական կամ մտավոր խնդիր է, որի պատճառով անձը ի վիճակի չի կատարել իր աշխատանքը: Անաշխատունակությունը ներառում է՝ ընտրովի վիրահատություն, հղիություն, ծննդաբերություն կամ նման այլ առողջության հետ առնչվող իրավիճակներ:

Ինչ է անաշխատունակության ապահովագրությունը

Անաշխատունակության ապահովագրությունը (DI) պետական անաշխատունակության ապահովագրության (SDI) ծրագրի մաս է կազմում: DI-ը փոխարինում է ձեր եկամտի աղբյուրին, երբ դուք ի վիճակի չեք աշխատել ոչ աշխատանքի արդյունքում առաջացած անաշխատունակության պատճառով: Ծրագիրը ֆինանսավորվում է ձեր SDI հարկային պահումների միջոցով: Դուք ամենայն հավանականությամբ իրավասու եք այդ նպաստը ստանալու համար, եթե SDI ծրագրին կատարել եք վճարումներ (վճարման անդորրագրերում նշվում է որպես «CASDI»):

Ընտրովի ապահովագրության փաթեթը ծրագիր է, որի շրջանակներում գործատուները, ինքնազբաղված անձինք և գլխավոր գործընկերները կարող են իրենց ընտրությամբ ապահովագրվել SDI-ի կողմից: Այս փաթեթներով վճարվող նպաստների չափն ու դրանց իրավասությունը որոշվում են տարբեր կերպ: Ծանոթացեք տարեկան վճարի արժեքին ձեր տեղական [Tax Office](http://edd.ca.gov/office_locator)-ում (edd.ca.gov/office_locator) կամ այցելեք [Disability Insurance Elective Coverage](http://edd.ca.gov/en/Payroll_Taxes/Disability_Insurance_Elective_Coverage) (edd.ca.gov/en/Payroll_Taxes/Disability_Insurance_Elective_Coverage):


Քաղաքացիությունը կամ ներգաղթային կարգավիճակը չեն անդրադառնում SDI նպաստների իրավասության վրա:



ԿԱԼԻՖՈՐՆԻԱՅԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ԱՇԽԱՏՈՒԺԻ

ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ



Անաշխատունակության Ապահովագրության Դրույթներ

Այս գրիտյիլը նախատեսված է բացառապես ընդհանուր տեղեկատվության համար, և չունի օրենքի ուժ կամ սպիեյություն:

EDD-ը հավասար հնարավորությունների գործատու/ծրագիր է: Անաշխատունակության կարգավիճակ ունեցող անձանց խնդրանքով տրամադրվում են օժանդակ օգնություն և ծառայություններ: Ծառայությունների, օժանդակ միջոցների և/կամ այլընտրանքային ձևաչափերի հարցումներն իրականացվում են զանգահարելով 1-866-490-8879 (ձայնային) հեռախոսահամարին: TTY-ից օգտվողներին խնդրում ենք զանգահարել Կալիֆոռնիայի փոխանցման ծառայություն 711 հեռախոսահամարով:



Ինչպես դիմել անաշխատունակության ապահովագրության նպաստների համար

1. Նպաստներ ստանալու դիմում ներկայացնելու համար օգտվեք [SDI Online](http://edd.ca.gov/SDI_Online) (edd.ca.gov/SDI_Online) հարթակից:

ԿԱՄ Թղթային դիմումի ձևաթուղթ պահանջելու համար՝

• Այցելեք [Forms and Publications](http://Forms and Publications (forms.edd.ca.gov/forms)) (forms.edd.ca.gov/forms):

• Ջանգահարեք 1-800-480-3287:

SDI-ով ապահովագրված Կալիֆոռնիայի նահանգային կառավարության աշխատակիցները պետք է զանգահարեն 1-866-352-7675:

2. Դիմողի կողմից ներկայացվող դիմումի A մասը լրացնելուց հետո, խնդրեք ձեր առողջապահության ոլորտի լիցենզավորված մասնագետին լրացնել դիմումի B մասը՝ ներկայացնելով բժիշկ/մասնագետի հավաստագիրն առցանց, կամ օգտագործելով թղթային ձևաթուղթը: Դիմումը առցանց ներկայացնելու դեպքում՝ SDI Online-ը ձեզ կտրամադրի կտրոնի համարը դիմումի A մասը ներկայացնելուց հետո: Ձեր լիցենզավորված առողջապահության ոլորտի մասնագետի կողմից B մասը լրացնելու համար կպահանջվի ձեր կտրոնի համարը: Դիմումը չի կարող ուժի մեջ մտնել լիցենզավորված բուժաշխատողի կողմից ձեր զննումից յոթ օրից շուտ կամ նրա խնամքի ներքո լինելու ընթացքում:

3. Ներկայացրեք առանց դիմում կամ ուղարկեք թղթային դիմումի ձևաթուղթ ձեր անաշխատունակության կարգավիճակի ուժի մեջ մտնելու օրվանից հետո 49 օրվա ընթացքում: Դիմումը ժամկետից ուշ ներկայացնելու դեպքում կարող եք կորցնել նպաստ ստանալու հնարավորությունը: Ավելին իմանալու համար՝ այցելեք [Appeals](http://Appeals (eedd.ca.gov/en/Disability/Appeals)) (eedd.ca.gov/en/Disability/Appeals):

Ինչ տեղի կունենա դրանից հետո

• Ճիշտ լրացված դիմումի մշակումը տևում է երկու շաբաթ:

• Մենք փոստով ձեզ կուղարկենք Հաշվարկման ծանուցում (DE 429D), որով կհաստատենք, որ ստացել ենք ձեր դիմումը և կներկայացնենք ձեզ հատկացվող նպաստի մոտավոր չափը:

• Եթե ստանաք Էլեկտրոնային Նպաստի Մուծման (*EBP*) ծանուցում (DE 2500E), ապա ձեր դիմումը հաստատվել է մեր կողմից:

• Եթե պահանջվեն լրացուցիչ տեղեկություններ, կամ եթե դիմումը մերժվի, մենք կապ կհաստատենք ձեզ հետ:

• Անաշխատունակության ապահովագրության դիմումի ներկայացմանը հաջորդող յոթ օրերը չվճարվող սպասման ժամանակահատվածն է: Եթե 60 օրվա ընթացքում ներկայացվի առաջին դիմումի նման կամ նույն առողջական վիճակին առնչվող այլ դիմում, այն կկցվի առաջին դիմումին և կհամարվի առաջին դիմումի մաս: Լրացուցիչ սպասման ժամանակ չի ավելացվի:

• Նպաստները կվճարվեն պահանջվող բոլոր տվյալների ընդունումից և ձեր դիմումի հաստատումից հետո: Նպաստների ստացման ժամանակաշրջանը երկու շաբաթ է: Եթե իրավասու եք լրացուցիչ նպաստներ ստանալու համար, ձեզ կուղարկվեն համապատասխան ձևաթղթեր, որոնք պետք է լրացնել և հետ ուղարկել: Փաստաթղթերի մշակման համար կպահանջվի 10 օր: Եթե ձեր նպաստների վճարումն ավարտվի շաբաթվա կեսին, ապա այդ շաբաթվա նպաստի վճարը կհաշվարկվի ըստ օրական դրույքաչափի: Այդ դրույքաչափը կազմում է ձեր շաբաթական նպաստի գումարի մեկ յոթերորդը:

• Նպաստը կստանաք ձեր կողմից նախընտրելի եղանակով, որը նշել եք դիմումի մեջ այն լրացնելու ժամանակ:



Ինչպես են հաշվարկվում նպաստները

Նպաստների չափը հաշվարկվում է հիմնվելով ձեր դիմումի ներկայացումից 5-18 ամիս առաջ ձեր ստացած աշխատավարձի 12-ամսյա ժամանակահատվածի (որը կոչվում է բազային ժամանակահատված) վրա: Իրավասու լինելու համար դուք պետք է բազային ժամանակահատվածի ընթացքում վաստակած լինեք առնվազն \$300:

Նպաստի չափը կարող եք հաշվել այստեղ [Disability Insurance and Paid Family Leave Calculator](http://Disability Insurance and Paid Family Leave Calculator (edd.ca.gov/PFL_Calculator)) (edd.ca.gov/PFL_Calculator):

Ինչը կարող է ազդեցություն ունենալ ընթացիկ նպաստների վրա

Ձեզ վճարվող նպաստը չի կարող գերազանցել ձեր ստացած մեկ շաբաթվա աշխատավարձը: Ձեր ստացած արձակուրդային վճարը DI նպաստների վրա չի անդրադառնում:

Արդյոք գոյություն ունի վճարվող նպաստի առավելագույն չափ

Նպաստի առավելագույն գումարը կազմում է ձեր նպաստների շաբաթական դրույքաչափի 52-ապատիկը, բայց ոչ ավելին, քան ձեր աշխատանքի ընթացքում վաստակած բազային ժամանակահատվածի գումարի չափը:

Բացառություն SDI-ով ապահովագրված գործատուների և ինքնագրաված անձանց նպաստի առավելագույն չափը կազմում է նպաստների շաբաթական դրույքաչափի 39-ապատիկը:

Հաշվի առեք, որ տվյալ նահանգի կողմից լիցենզավորված և հավաստագրված՝ ակրհոլիզմից վերականգնման հաստատությունների կամ թմրամիջոցներից վերականգնման բնակելի հաստատությունների բուժառուներին նպաստները վճարվում են սահմանափակ ժամանակով: Այնուամենայնիվ, այս սահմանափակումը չի վերաբերում բուժման մեջ զոնվող սուր կամ քրոնիկ ակրհոլիզմի կամ թմրամոլության հետ կապված հաշմանդամության դեպքերին: DE 2515/A Rev. 68 (01-22) **(INTERNET)** էջ 1՝ 2-ից

Անհատների իրավունքները նպաստների մերժման դեպքում

• Դուք իրավասու եք իմանալ ձեր նպաստների մերժման որոշման հիմքը հանդիսացող պատճառները:

• Դուք կարող եք բողոքարկել ձեր նպաստների իրավասության վերաբերյալ ցանկացած որոշում: Գրավոր բողոքը հարկավոր է ուղարկել DI գրասենյակ:

• Դուք կարող եք բողոքարկման լսում պահանջելու համար դիմել վարչական դատարանի դատավորի (ALJ): Հետագայում դուք կարող եք բողոքարկել ALJ-ի որոշումը Կալիֆոռնիայի Գործազրկության ապահովագրության բողոքարկման խորհրդում կամ այլ դատարաններում:

• Ձեր տվյալների գաղտնիությունը Բողոքարկմանն առնչվող տեղեկությունները կապվեն գաղտնի՝ բացառությամբ օրենքով թույլատրված դեպքերի:

Կապվեք DI-հետ

• Անգլերենի համար՝ 1-800-480-3287:

• Իսպաներենի համար՝ 1-866-658-8846:

• Ուղարկեք նամակ ԱՄՆ փոստային ծառայության միջոցով PO Box 13140, Sacramento, CA 95813-3140: Եթե չունեք ընթացիկ բողոքի հայց, ապա կարող եք նամակ ուղարկել ցանկացած DI գրասենյակ: Նշում Բողոքարկման ձևաթղթերը մի ուղարկեք վերոնշյալ հասցեով:

• TTY-ով (միայն TTY-ից օգտվողների համար)՝ 1-800-563-2441:

• Անձամբ՝ այցելելով ցանկացած [DI Office](http://DI Office (edd.ca.gov/office_locator)) (edd.ca.gov/office_locator):

Եթե ձեր անաշխատունակությունը մշտական է կամ ենթադրվում է, որ այն կշարունակվի մեկ տարի կամ ավելի, կապվեք US Social Security Administration հետ (ssa.gov) կամ զանգահարեք 1-800-772-1213 (TTY 1-800-325-0778):